ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/169

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2019թ. թիվ 26/26-1/16849-2019 գրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 14.10.2019թ. թիվ Ե/01/274-19 գրության հիման վրա, 14.10.2019թ. թիվ 26/26-1/16849-2019 գրությամբ նախաձեռնել է «Յդկադ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Յդկադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Յդկադ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/169 ընթացակարգի շրջանակներում 17.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.10.2019թ. թիվ Ե/01/274-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում ս.թ. մարտի 19-ին կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագիր «Յդկադ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. օգոստոսի 03-ը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

- պայմանագրային պարտավորությունների կատարման համար սահմանվել է լրացուցիչ երկամսյա ժամկետ, որի ընթացքում իրականացվող աշխատանքների ընթացքը մնացել է անբավարար,
- մինչև օրս իրականացվել է նախատեսված շինարարական աշխատանքների ընդամենը՝ 7967013 ՀՀ դրամի չափով, և հիմք ընդունելով «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (բ) ենթակետի և 6.3 կետի դրույթները՝ լուծվել է 19.03.2019թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/169 ընթացակարգի շրջանակներում 17.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 19.03.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագիր (հետայու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
2. Պատվիրատուին կողմից 10.10.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.10.2019թ. թիվ 26/26-1/16849-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 14.10.2019թ. թիվ Ե/01/274-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 19.03.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում» աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 15 907 500 ՀՀ դրամ:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ աշխատանքները սկսվում են 05.04.2019 թվականից և կատարման ժամկետ է սահմանվում 120 օր:

Ընկերությանն ուղղված 01.08.2019թ. թիվ 2/86 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է ավարտվեին մինչև 03.08.2019թ., սակայն առ 02.08.2019թ. չեն ավարտվել: Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի 3.1.2 կետով սահմանված կարգով Ընկերությանը տրվում է ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման նոր ժամկետ՝ մինչև 02.09.2019թ. և միաժամանակ մինչև աշխատանքների ավարտման օրը կկիրառվի Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ ծրագրով նախատեսված աշխատանքները դանդաղ և ոչ պատշաճ իրականացնելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Ընկերությանն ուղղված համապատասխան գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունների կատարման համար սահմանվել է լրացուցիչ երկամսյա ժամկետ, որի ընթացքում իրականացվող աշխատանքների ընթացքը մնացել է անբավարար, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (բ) ենթակետի և 6.3 կետի դրույթները, որոշվել է լուծել «Յդ կադ» ՍՊԸ-ի հետ 19.03.2019թ.

կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 10.10.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «3դկադ» ՍՊԸ-ի միջև 19.03.2019թ. կնքված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/28» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 05.04.2019թ. սկսած 120 օրյա ժամկետում իրականացնել 15 907 500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ վերանորոգման աշխատանքներ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետներում ամբողջությամբ չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները և Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, համաձայն գործում առկա հանձնման-ընդունման թիվ 1 և թիվ 2

արձանագրությունների՝ իրականացվել են ընդամենը 6 378 023 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ վերանորոգման աշխատանքներ:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2019թ. թիվ 26/26-1/16849-2019 գրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Յդկադ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**